Հավելված N 2
2024 թվականի հունվարի 22-ին կնքված
1032-11003/24-ԳԾ պայմանագրի

# ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ N 1

1. Ընդհանուր տեղեկատվություն

| | |
|---|---|
| Միջոցառման անվանում | «Տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց ցերեկային խնամքի տրամադրում և սոցիալապես անապահով անձանց սննդի կազմակերպում» |
| Դրամաշնորհի N | Լոտ 12. Գեղարքունիքի մարզ -ճաշարան |
| Դրամաշնորհատու կազմակերպություն | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն |
| Դրամաշնորհառու կազմակերպություն | «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպություն |
| Միջոցառման իրականացման ժամանակահատված | 01.01.2024-31.12.2024թթ. |
| Հաշվետու ժամանակահատված | 01.01.-31.03.2024թթ. |
| Ներկայացման օր | 01.04.2024թ. |
| Հաշվետվության պատասխանատու<br>(անուն, ազգանուն, պաշտոն) | Սիրանուշ Սողոմոնյան<br>Սոցիալական աշխատանքի սուպերվիզոր |

Digitally signed by
MKHITARYAN
YERVAND
2508730335
Date: 2024.04.10
15:13:44 AMT

2. Բովանդակային հաշվետվություն

**2.1. Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 և թիվ 7 հավելվածներով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:**

Հաշվետու ժամանակահատվածի համար կատարման ենթակա գործողություններն են.

- սննդի (տաք ճաշի) տրամադրում,
- սոցիալական խորհրդատվություն,
- այլ ծառայությունների տրամադրում՝ ըստ անհրաժեշտության:

**2.2. Խնդրում ենք նկարագրել միջոցառման առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների, նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ միջոցառման խնդիրների/նպատակի իրականացմանը:**

- Սննդի (տաք ճաշ) տրամադրման ծառայության շրջանակներում՝ կազմակերպության նախագահի կողմից հաստատված ճաշացանկով, ճաշարանում շաբաթական 5 օր տրվել է տաք ճաշ, ինչպես նաև սուրճ, միրգ և քաղցրավենիք: Հաշվետու ժամանակահատվածում ծառայությունից օգտվել է 50 շահառու:
- Սոցիալական խորհրդատվության տրամադրման շրջանակներում համակարգող/սոցիալական աշխատողը ճաշարան դիմող անձանց տեղեկատվություն է տրամադրել ճաշարանից օգտվելու կարգի վերաբերյալ, վերահսկել ճաշարան հաճախող շահառուների հաճախելիությունը, ճշտել բացակայությունների պատճառները, անհրաժեշտության դեպքում իրականացրել տնայցեր: Համակարգող/սոցիալական աշխատողը պարբերաբար խորհրդատվություն է տրամադրել շահառուներին իրենց իրավունքների, համայնքում գործող սոցիալական ծրագրերի վերաբերյալ: Սոցիալական աշխատողի կողմից իրականացվել է 4 դեպքի վարում: Դեպքերը ուղղված են եղել տեսողության խնդիր ունեցող շահառուի համար օժանդակ միջոցի ձեռքբերմանը, տան սեփականության վկայականի ձեռքբերման կազմակերպանը, Միասնական սոցիալական ծառայության տարածքային կենտրոնում փաստագրմանը: Հաշվետու ժամանակահատվածում շահառուների հիմնախնդիրների լուծման նպատակով իրականացվել է 25 ուղղորդում, միջամտություն/միջնորդում այլ կառույցներ:
- Այլ ծառայությունների տրամադրում.
  - Հոգեբանական աջակցության կարիք ունեցող 5 շահառուի հոգեբանը անհատական խորհրդատվություն է տրամադրել, իսկ 33 շահառու ներգրավվել են հոգեբանական խմբային հանդիպումներին:
  - Շփման և զբաղվածության կարիք ունեցող 32 շահառուներ մասնակցել են կենտրոնում գործող երգ-երաժշտության, գեղարվեստական գրականության, ասմունքի, տեղեկատվական, ջյուղագործության և ձեռագործության խմբակներին:
  - Ճաշարանի 31 շահառու մասնակցել է կենտրոնում կազմակերպված Սուրբ Զատկի տոնին, Հայոց բանակի օրվան, Տեառնընդառաջին, Գրքի տոնին, շահահառուի ծննդյան տարեդարձին, Կանանց միջազգային օրվան, Բարեկենդանին և Ծաղկազարդին նվիրված միջոցառումներին:
  - 3 շահառու ( շարունակական) օգտվել է լվացքի ծառայությունից:

**Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)**

Հաշվետու ժամանակահատվածում համացանցում տեղադրվել են հետևյալ նյութերը.

- Տեառնընդառաջին նվիրված միջոցառումներ (տե՛ս հետևյալ հղումներով՝ http://surl.li/rukec, http://surl.li/rukfn, http://surl.li/rxisi),
- Հիշողության խաղ (տե՛ս հետևյալ հղմամբ՝ http://surl.li/rukga),
- Հատված թումանյանական օրերից (տե՛ս հետևյալ հղմամբ՝ http://surl.li/rukgw),
- Հատված երաժշտական խմբակից (տե՛ս հետևյալ հղմամբ՝ http://surl.li/rukhk),
- Կենտրոնի առօրյան (տե՛ս հետևյալ հղմամբ՝ http://surl.li/rukhy),
- Կանանց միջազգային օրվան նվիրված միջոցառումներ (տե՛ս հետևյալ հղումներով՝ http://surl.li/rukio, http://surl.li/rzzhe, http://surl.li/rukka, http://surl.li/rukjf),
- Շահառուի ծննդյան օրվան նվիրված միջոցառում (տե՛ս հետևյալ հղումներով՝ http://surl.li/ryktp, http://surl.li/rykvr),
- Գրական խմբակ (տե՛ս հետևյալ հղմամբ՝ http://surl.li/rykwo),
- Սուրբ Զատկի տոնի նախապատրաստական աշխատանքներ (տե՛ս հետևյալ հղումներով՝http://surl.li/rykym, http://surl.li/rylab)։

**2.3. Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են միջոցառման գործողությունների իրականացմանը:**

Հաշվետու ժամանակահատվածում ծրագրի գործողությունների իրականացմանը խոչնդոտող խնդիրներ չեն առաջացել:

**2.4. Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները (կցելով նաև շահառուների ցուցակը):**

Հաշվետու ժամանակահատվածում նախատեսվում է շարունակել իրականացվող հետևյալ գործողությունները.

- սննդի (տաք ճաշի) տրամադրում,
- սոցիալական խորհրդատվություն,
- այլ ծառայությունների տրամադրում՝ ըստ անհրաժեշտության:

**2.5. Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել միջոցառման աշխատանքային պլանով, բայց իրականացվել են միջոցառման նպատակին հասնելու համար:**

Ձևաչափ

ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպության ճաշարանի շահառուներին մատուցված ծառայությունների վերաբերյալ

| h/h | Մատուցվող ծառայության անվանումը | Ծառայություն ստացած անձանց թիվը |
|---|---|---|
| 1. | հաշվետու ժամանակահատվածի՝ սկզբում/վերջում շահառուների թվաքանակը | 50/50 |
| 1.1 | այդ թվում՝ կին | 29 |
| 1.2 | այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձինք՝ 18-65 տարեկան | 25 |
| 1.2.1 | այդ թվում՝ կին | 12 |
| 1.2.2 | 18-40 տարեկան | 12 |
| 1.2.3 | 40-65 տարեկան | 13 |
| 1.3 | 65 տարեկանից բարձր | 25 |
| 1.4 | երեխաներ (միայն ճաշարանի պարագայում) | - |
| 2. | մեկանգամյա սննդի տրամադրում | 50 |
| 3. | Այլ ծառայություն (նշել) Միջոցառումների կազմակերպում | 31 |

Կազմակերպության ղեկավար *Երվանդ Մխիթարյան* «04» 04.2024թ

(ստորագրություն, անուն,ազգանուն)